ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 7
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

21.11.2019թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Տեղեկատվության տրամադրում նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. ՀՀ կառավարության 30.09.2019թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1292-Լ որոշման մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

3. Տարեցների միամսյակին նվիրված «Պարգևիր ժպիտ» ամենամյա բարեգործական ակցիայի մասին՝

/Տեղեկատվության տրամադրում՝
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագրի Վանաձորի համակարգող Հասմիկ Հովսեփյան և
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

Շնորհակալագրերի հանձնում «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության և Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի կողմից

4. Տեղեկատվության տրամադրում 2019թ. ընթացքում «Խաչվող ուղիներ» ՍՀԿ-ի կողմից «Հատուկ կարիքներով երեխաների սոցիալ հոգեբանական և զարգացման ցերեկային խնամքի կենտրոն» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների մասին:

/Զեկ.՝ «Խաչվող ուղիներ» ՍՀԿ՝ Կամո Եգանյան, Վահան Դավոյան/

5. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հիմնահարցերի լուծմանը նվիրված միամսյակի մասին /15.11.2019թ. – 15.12.2019թ./:

6. Հայտարարություններ.

Արա Առաքելյան – Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն

Ալեքսան Բալայան – Հարմարեցված տրանսպորտային ծառայության մասին:

7. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1.Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին /կազմակերպչական/ և Հանձնաժողովի անդամ ունեցող Հասարակական կազմակերպություններին՝

Ակտիվ մասնակցություն ունենալ Հաշմանդամների իրավունքների միջազգային օրը՝ 2019թ. դեկտեմբերի 3-ին ժամը 11.00-ից՝ Վանաձորի Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տանը միջոցառմանը կազմակերպվելիք Հանձնաժողովի նիստին /ելույթներ, պարգևատրություն, Հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործությունների ցուցահանդես-վաճառք/:

2. Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապերի բաժնին՝

Ապահովել աշխատանքների հրապարակայնությունը և այն զետեղել ՀՀ Լոռու մարզպետարանի կայք-էջում:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Վ.Ջաղինյանը /2-33-99/